ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

№ 1112/50309-23
26.09.2023

Էլ. փոստ՝ foi@foi.am
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ տնօրեն
Շուշան Դոյդոյանին

Հարգելի՛ Շուշան Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր հարցման (ԱԳՆ մուտքագրվել է 13.09.2023թ.)՝ տեղեկացնում ենք, որ Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման թույլտվության տրամադրման վերաբերյալ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը լիազոր մարմին ներկայացնում է կարծիք՝ առաջնորդվելով «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» 2010թ. ապրիլի 8-ի ՀՕ-42-Ն օրենքով ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների կատարման անհրաժեշտությամբ:

Այս համատեքստում միջազգային պարտավորություն է համարվում օտարերկրյա ձեռնարկությունից հսկվող ապրանքների ձեռքբերման ընթացքում ՀՀ ձեռնարկության կողմից տրամադրվող վերջնական օգտագործման հավաստագիրը, համաձայն որի հայկական կողմը ստանձնում է նշված ապրանքները երրորդ երկիր չփոխանցելու պարտավորություն՝ առանց այն երկրի լիազոր մարմնի համաձայնության, որտեղից այդ ապրանքները ձեռք են բերվել:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը լիազոր մարմնին կարծիք տրամադրելիս հիմնվում է վերոնշյալ նկատառումների վրա՝ նպատակ ունենալով հայկական ձեռնարկություններին զերծ պահել պատժամիջոցների տակ հայտնվելու հեռանկարից:

Հարգանքով՝

Իննա Թորգոմյան
Լրատվության և հանրային դիվանագիտության
վարչության պետի պ/կ

Լրատվամիջոցների հետ կապի և հանրային դիվանագիտության բաժին
Հեռ. 060620219